

616.9

Ե-28

ՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ. ԳՐՔՈՒՅՑ № 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՍԱՀ-1,01-0 86/Բ.Ժ.Բ

ԿԱՏԱԼՈՒԹՅՈՒՆ

(ՀՐԱՎԱԽԱԿՈՒԹՅՈՒՆ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՌԴՈՂԿՈՄԱՏԻ

ԵՐԵՎԱՆ - 1928

4 AUG 2010

ԱՊՈՂԶԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՀԱՆՐԱՍԱՏԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐՔՈՒՅՑ № 10

ՍՍ.Ն.ՀԱ.ՄԱ.ՀԱ.ՐԸ.ԿՈ.ԳԻ.ՑԱ.ԿԱ.Ն. ԲԱ.Ժ.Կ.Ի.Ե.

ՍՍ.Ն.ԼՈՒԾ ՅԵ/ԲԱ.Ժ.Կ.Ի.Ե.

616.9
9-28
մար.

ԿԱՏԱԼՈՒԹՅՈՒՆ

(ԶՐԱՎԱԽՈՒԹՅՈՒՆ)

300
10577

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՌԴՈՂԿՈՄԱՏԻ

ԵԵՐԵՎԱՆ - 1928

ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ

Կատաղությունը վարակիչ հիվանդություն
եւ առաջ եւ գալիս կատաղած կենդանիների
կծելուց:

Կենդանիներից ամենից շատ կատաղում են
շները, կատուները, բայց հաճախ կատա-
ղում են և անային ուրիշ կենդանիները, որի-
նակ՝ ձին, վոչսարը, խոզը, կովը, թռչոնները
և այլն: Վայրենի կենդանիներն ել կարող են
կատաղել, ինչպես որինակ՝ գայլը, աղվեսը, վող-
նին, մուկը և այլն:

Ի՞ՆՉ ՆՇԱԽՆԵՐ ՈՒՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Կենդանիների կատաղությունը յերկու տե-
սակ ելինում՝ խաղաղ և մոլեգին: 100 կատաղած
շներից 80-ը մոլեգին են իսկ 20-ը խաղաղ: Կա-
տաղությունից մի յերկու որ առաջ հայտնվում են
հիվանդության նշանները, շունը տիտոր եւ և

միենուին ժամանակ անհանգիստ. նա աշխատում է առանձնանալ, տիրոջ կանչը համարյա թե չի լսում, անից վախչում ե, ուտելլ դեռ չի խանգարված, թեև ահաճությամբ ե ուտում. բացի դրանից նա յերբեմն ագահությամբ կուլ ե տալիս վոչ ուտելու իրեր՝ հարդ, շորի կտորներ, ածուխ, խոտ և այլն:

1—2 որից հետո սկսվում ե իսկական հիվանդությունը. կատաղած շունը հարձակվում ե ամենքի և ամեն բանի վրա. յերեխ նա ամենուրեք թշնամիներ ե տեսնում և աշխատում ե պաշտպանվել նրանցից ու հարձակվում ե մարդկանց վրա, ուրիշ կենդանիների և թռչունների վրա:

Կատաղած շունը ջրից ամենևին չի վախենում, հակառակ մարդուն, վորը կատաղած դըրության միջոցին սաստիկ վախենում ե ջրից, մարդը տեսնել անգամ ջուրը չի կարող:

Շան այս տեսակ դրությունը տեսում ե 2—4 որ և դա ամենավտանգավոր դրությունն ե, վորովինետև սովորաբար կատաղած շունը տնից փախչում ե, սկսում ե հարձակվել և կծել ում պատահում ե: Վերջիվերջո հայտնվում են լուծանքները՝ ստորին ծնոտը քարշ ե ընկնում, լեզուն դուրս ե ընկնում, բերանից փրփուր, թուրք ե հոսում, քաղցրածքը յերերուն ե, յետեի վոր-

ները քարշ ե տալիս, շնչառությունը խանգարված ե, վերջիվերջո հիվանդ շունը պառկում ե և սատկում: Հիվանդությունն ընդամենը տևում 5—8 որ, յերբեմն և 10—12 որ:

Այսպիս ե ընթանում կատաղության մոլեգին տեսակը:

Խաղաղ կատաղության դեպքում շունը հանգիստ ե, կուլ տալը խանգարված, վոչ ուտում ե, վոչ խմում և բերանից հոսում ե փրփուրը:

Այս դրության շունը չի հարձակվում ուրիշ վրա, բայց կկծի, յեթե չարչարեն:

Յերբեմն հիվանդ շունը շատ հեղ ե, լիզում ե տիրոջ ձեռքերը և վոչ վոք չի կասկածում, վոր շունը կատաղած ե. այդ տեսակ շունն ավելի վտանգավոր ե, լիզելով նա կարող ե աննկատելի կերպով վարակել տիրոջը, յեթե այս վերջինի մաշկի վրա կա մի վորեե պլոկվածք կամ ճանգովածք:

Ուրիշ կենդանիների կատաղությունը շատ նման ե շան հիվանդությանը:

Այս հիվանդությունն անպայման վերջանում ե մահով բոլոր դեպքերում:

Ի՞ՆՉ ՆԵԱՆՆԵՐ ՈՒՆԻ ԿԱՏԱՂԱՄ ՄԱՐԴԸ

Հիվանդանալուց 2—3 որ առաջ վարակվածը դպում ե, վոր իրեն հետ մի ինչ վոր արտասո-

վոր բան եւ պատահել. նա անհանգիստ ե, տը-
խուր ե, դուռագրգիռ ե լավ չի քնում: Յեր-
բեմն նրա աշքին զանազան պատկերներ են
յերևում:

Հիվանդությունը գնալով զարդանում ե, դը-
րան զուգընթաց անհանգստությունն ել շատա-
նում ե, քունը փախչում ե, կուլ տալը դժվա-
րանում: Հիվանդը ևս առավել չի կարողանում
կուլ տալ ջուրը. մինչև անգամ ջրի սոսկ տեսքն
առաջացնում ե սանդանքներ և հիվանդն անկա-
րող ե կատարել կուլ տալու շարժումներ, որի-
նակ՝ թուքը կուլ տալ. Ջրի մասին խոսքն ան-
գամ կարող ե առաջացնել սանդանքներ, այդ
պատճառով ել հիվանդությունը կոչվում է ԶԲԱ-
ՎԱԽՈՒԹՅՈՒՆ:

Իբրև հետեանք այդ տեսակ դրության,
թուքը կիսվում ե հիվանդի բերանի մեջ, շարու-
նակ թքում ե կամ թուքն անդադար հոսում ե
հիվանդի բերանից:

Հիվանդի գիտակցությունը չի կորած. միե-
նուն ժամանակ նա հաճախ արտասանում ե ան-
կապ խոսքեր, անհանգիստ շարժումներ ե գոր-
ծում, փորձում ե փախչել անից:

Յեթե ուժ գործ գնեն, հիվանդը կարող ե
հարձակվել ու կծել շրջապատողներին,

Ի՞ՆՉԻՑ Ե ԱՌԱՋ ԳԱԼԻՍ ԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ասացինք, այդ հիվանդությունը
վարակիչ ե և առաջ ե զալիս մի վորեւե կատա-
ղած կենդանու (շան, գայլի, կատվի) կծելուց:

Հայտնի լի, վոր վարակիչ հիվանդություն-
ներն ունեն իրենց մանրեները, վորոնք հասա-
րակ աշքով անտեսանելի, շատ փոքր արարած-
ներ են:

Կատաղությունն ել, ինչպես վարակիչ հի-
վանդություն, ունի իր հարուցիչը, վորը մինչև
այժմ գտնված չե, բայց լավ հաւտնի յեն նրա
հատկությունները:

ՎՈՐՈՂ ԵՆ ԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԿԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Վարակը գտնվում ե կատաղած կենդա-
նու կամ մարդու ուղեղի (թե զլիի և թե վող-
նուղեղի) մեջ, թքի մեջ, բայց արյան մեջ չկա:

2) Վարակն անցնում ե կատաղածից առող-
ջին վոչ թե արյան միջոցով, այլ ներ վերի
միջոցով:

3) Վորքան մոտ ե կծած տեղը զլիին, այն-
քան վտանգավոր ե հիվանդությունը:

4) Ողի միջոցով վարակը չի տարածվում,

ուտելիքի և խմելիքի միջոցով չի անցնում նա, յեթե բերանի մեջ կամ ձեռքերի վրա պլոկ-վածքներ չկան:

5) Տաքության բարձր աստիճանը սպանում ե ալդ թույնը. որինակ, յեթե կատաղած շան ուղեղը սրսկենք մի ուրիշ կենդանու, մի քանի որից հետո այս կենդանին նույնպես կկատաղի, բայց յեթե յեռացնենք ուղեղն ու հետո սրսկենք, այն ժամանակ կենդանին չի հիվանդանա:

6) Թույնն անցնում ե առողջին մարմի մի վորևե պլոկվածքից կամ կծած վերքից, ուստի մարմի բաց տեղերի կծած վերքն ավելի վտանգավոր ե, քան շորով ծածկած տեղի վերքը:

7) Վարակը հիվանդից առողջին չի անցնում շփման միջոցով, յեթե հիվանդը չկծի առողջին կամ նրա թուքը չընկնի առողջի մի վորևե վերքի վրա:

8) Կատաղած կենդանու թուքը վարակիչ ե հիվանդության բռնելուց մոտավորապես 14 որ տուաչ:

9) Հիվանդ կենդանու միսը բոլորովին վրտանգավոր չե. միսը չի պարունակում վարակ:

10 Կատաղած կենդանու կաթի մեջ կա կատաղության վարակ:

11) Սատկած կենդանու ուղեղը ևս պարունակում ե թույն:

ՅԵՐԲ Ե ՀԱՅՏՆՎՈՒՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Կատաղած շան կծելուց մարդ կարող է հիվանդանալ առաջին յերեք ամսվա ընթացքում. յերեք ամիս անցնելուց հետո սակավ են հիվանդության դեպքերը. յերեխաներն ավելի շուտ են հիվանդանում, քան հասակավորները. շներն ավելի ուշ, քան մարդը. վորքան մեծ ե կենդանին, այնքան ուշ ե հիվանդանում կծելուց հետո և ընդհակառակը՝ վորքան փոքր ե կենդանին, այնքան շուտ ե հիվանդանում:

Հիվանդության վաղ կամ ուշ հայտնվելը կախում ունի նրանից, թե մարմի վորտեղն ե կծած. յեթե վլուխն ե կծած, շուտ են հիվանդանում, յեթե ձեռքերն են կծած, հիվանդանում են ուշ, իսկ յեթե վոտներն են կծած, այն ժամանակ ավելի ուշ են հիվանդանում:

Հիվանդության վաղ կամ ուշ հայտնվելը կախում ունի և այն բանից՝ վերքը խորն ե, թե սաղը. խոր վերքերն ավելի վտանգավոր են, քան մակերեսավենները:

Հիվանդության հայտնվելը կախում ունի կծող կենդանուց. տափակ տատամիեր ունեցող կենդանու կծածն այնքան ել վտանգավոր չե, վորքան սուր ժանիքներ ունեցող կենդանու կր-

ծածը, որինակ՝ շան, կատվի, գալի... գալի կը-
ծածից ավելի շուտ են հիվանդանում, շան կը-
ծածից՝ ուշ, իսկ կատվի կծածից՝ ավելի ուշ:

ԿԱՏԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՍՑՐԱՄ ՎՆԱՍՆԵՐԸ

Քանի վոր հայտնի չեք բժշկելուձեր, կատա-
ղած կենդանիների կծածից շատերն ելին մա-
հանում. նըանց $35 - 50\%$ մահանում եր. Բժըշ-
կության ձեր գտնելուց հետո այս 0% -ը խիստ
պակասեց:

ԽՍՀՄ ի մեջ տարեկան մոտ $50,000$ մարդու
յն կծում կատաղած կենդանիները. այս թվից
պարզ է, թե վորքան նյութական վնասներ ե
առաջանում կատաղած կենդանիների կծելուց,
վորքան բանվորական որ են կորցնում կծածնե-
րը բժշկության համար, վորքան ծախք և լի-
նում գնալ գալու համար (այդ տեսակ հիվանդ-
ներին, ինչպես մենք հետո կտեսնենք, ուղար-
կում են Պատարելան կատաները սրսկումների
համար):

Բացի դրանից չպետք է մոռանալ և այն
հանգամանքը, վոր կծածներն ավելի շատ են
գարնանը և ամառը, այսինքն՝ վյուղատնտեսու-
թյան ամենալեռուն ժամանակը:

Յեվ յեթե ի նկատի ունենանք, վոր յուրա-

քանչյուր կծած առնվազը կարգնում ե բժըշ-
կության համար $12 - 21$ որ, այն ժամանակ հաս-
կանալի կլինի, թե վորքան նյութական վնաս ե
ստանում պետությունը կատաղության պատ-
ճառով:

Ի՞ՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՅԵՐԵ ԿԱՏԱՂԱՄ ՇՈՒՆԵ ԿԾԵԼ Ե

Կատաղած կենդանու կծելուց հետո (շան,
գալի, կատվի և այլն) պետք ե անպատճառ
և առանց հետաձգելու տանել կծածին Պաստեր-
յան կայանը, վորտեղ կատաղության դեմ սր-
բըսկումներ են անում:

Ի՞ՆՉ Ե ՊԱՍՏԵՐՅԱՆ ԿԱՅԱՆԸ

Սրանից 40 տարի առաջ Պաստեր անունով
մի ֆրանսիացի գիտնական գտավ, վոր կատա-
ղությունը կարելի է կանխել, սրսկելով կծածին
կատաղության թուլացրած թույնը:

Մենք գիտենք, վոր կատաղության թույնը,
վարակը, զիսավորապես գտնվում է կատաղած
կենդանու զիսի և վողնուղեղի մեջ: Կատաղու-
թյան թույնով վարակված և մեռած կենդանու
վողնուղեղը հանում են ու չորացնում: Այդպես
չորացրած ուղեղը քանի թարմ է, քանի նա տա-

կավին լով չե չորացած, վասնգավոր է, նաև
վարակիչ ե, իսկ մի վորոշ ժամանակից հետո
ոյդ ուղեղը վասնգավոր չե ազնու:

Պատերի փորձերը ցույց են ավել, վոր կա-
տաղած կենդանու ուղեղը 14 որ չորացնելուց
հետո սրսկելիս այլևս չի վարակում, այսինքն կա-
տագություն չի առաջացնում:

Նրա փորձերն ապացուցեցին նաև, վոր Յոր-
յա չորացրած ուղեղը վարակիչ ե:

Պատերը, սկսելով սրսկումները 14 որ վա-
չորացրած ուղեղից, աստիճանաբար իջավ և հա-
սավ Յ որյա չորացրած ուղեղին և ինչ դատավ.
դատավ այն, վոր աստիճանաբար իջնելով չորա-
ցրած ուղեղից թարմին կարելի յէ պաշտպանել
կենդանուն և թարմ ուղեղի վարակից:

Անա թե վորքան մեծ զյուտ եր Պատերի
գտածը:

Անցան տարիներ, ուղեղի պատրաստելու ձեր
կատարելագործեցին, սրսկումները նույնպես կա-
տարելագործեցին, բայց Պատերի գաղափարը
մնաց նույնը և այժմ այն հիմնարկությունները,
վորտեղ կատաղած կենդանիներին անդամահա-
տում են, հանում են վողնուղեղը, չորացնում և
պատվաստ պատրաստում ու հիվանդներին, կա-
տաղած կենդանիների կծածներին, բժշկում, կոչ-
վում են Պատերյան կայան, ի նշան յերախտա-

գիտության զեսլի այն գիտնականը, վորն իր
զբուտով մեծ բարիք ե արել կատաղած կենդա-
նիների կծածներին: Այդպիսի մի կայան հիմ-
նված ե Յերեանում արոպիկական ինստիտու-
տին կից:

ՅԵՐԲ ՊԵՏք Ե ԱԿՍԵԼ ԲՈՒԺՈՒՄԸ

Պետք ե կատաղած կենդանու կծածին ԱՆ-
ՄԻԶԱՊԵՍ փոխադրել կայսն, վորովհետեւ վորքան
շուտ սկսվի բուժումը, այնքան մեծ հույս կա,
վոր կծածը չի հիվանդանա. ընդհակառակը, բը-
ժշշկության ուշանալիս սրսկումները չեն ոգ-
նում և կծածը կարող ե կատաղել:

Կատաղած շան կամ մի այլ կենդանու կը-
ծելու դեպքում չպետք ե բաել զանազան մարդ-
կանց, չպետք ե հավատալ ու դիմել զանազան
«նետ» դնողներին, աղոթքով բժշկողներին, չը-
պետք ե շան դիակի վրայից թռչել, կամ նրա մազը
պոկել, չպետք ե դիմել զանազան սրբերին
ու վանքերին, ինչպես անում եյին մի ժամա-
նակ և գուցե հիմա յել շատերն անում են, այլ
պետք ե անհապաղ և անմիջապես դիմել Պատ-
երյան կայան. չմոռանալ, վոր յուրաքանչյուր
ուշացրած որ կարող ե սոսկալի հետեանք տալ,
մանավանդ, յերբ կծած վերքերը յերեսի ու ձեռ-

քերի վրա յեն, մարմաի այն մասերի վրա, զո՞րոնք շատ հարուստ են ներվերով և միշտ ել բաց են:

Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՊՐԵՆ ԲԺՇԿՎՈՂՆԵՐԸ

Բժշկվելիս չպետք ե դործածել խմիչքներ, ծանր աշխատանքով չպետք ե գրադվել և պետք ե զգուց լինել մրսելուց, այս բոլորը թուլացնում են հիվանդի կազմվածքը, պակասեցնում են նրա դիմադրական ուժերը, այդ պատճառով կծածները, չնայած սրսկումներին դարձալ հիվանդանում են: Ուշ սկսած սրսկումները չեն ոգնում: Հիվանդության սկսվելու դեպքում սրսկումները նույնպես չեն ոգնում. հինանդացողն անպատճառ մեռնում է. ուստի կծելուց անմիջապես հետո պետք ե կատարել սրսկումները, վոր կծածը չհիվանդանա:

Ի՞ՆՉՊԵՍ ԿՐՎԵԼ ԿԱՏԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Նախ և առաջ պետք ե իմանալ, վոր յերեմն կատաղած կենդանիների կծելուց հետո ուշ են հիվանդանում: Եներն ու կատուները կծելուց հետո հենց առաջին ամսվա մեջ հիվանդանում են, բայց կան դեպքեր, յերբ շունը հիվանդանում ե ավելի ուշ, որինակ 3—6 ամսից հետո, իսկ յերբեմն և ավելի ուշ:

Այդ պատճառով շատ վտանգավոր ե տանը պահել կատաղած կենդանու կծած շանը կամ կատվին, մանավանդ, յերբ շունը կապած չե, այլ միշտ ազատ ե: Բացի դրանից չպետք ե մոռանալ, վոր հիվանդությունը հայտնվում ե հանկարծ, բոլորովին անսպասելի և դժվար ե հարկ յեղած միջոցները ձեռք առնել ժամանակին, վոր կատաղած շունը չկծի վոչ վոքի կամ չփախչի տնից և մնաներ չտա ուրիշներին:

Անհրաժեշտ ե ԱնչԱՊԱՂ, ՍՊԱՆԵԼ (գընդականարել կամ գեղել) բոլոր այն շներին ու կատուներին, վորոնց կծել ե մի վորեե կատաղած կենդանի կամ մինչեւ անգամ կծել ե կատաղության նկատմամբ կասկածելի կենդանի, չմոռանալ, վոր այդ կենդանիները մահացու վըտանգ են սպառնում մարդկանց:

Տնալին մյուս կենդանիներին, վորոնց կծել ե մի վորեե կատաղած կամ կասկածելի կենդանի և վորոնք այնքան վտանգավոր չեն, վորքան շրներն ու կատուները, պետք ե կապած պահել փակ շենքում մի վորոշ ժամանակ, որինակ ձիերին և կովերին 4 ամսով, իսկ վոչխարներին ու ալծերին 3 ամսով. այս ժամանակն անցնելուց հետո յել այդ կենդանիները պետք ե մնան հըսկողության տակ մի ամբողջ տարի: Հենց վոր կատաղության նշանները յերեան, պետք ե փակել

հիվանդ կենդանուն և հայանել անասնաբուժին (յեթե կա այդպիսին). յերբ հաստատվի, վոր կենդանին կատաղել ե, պետք ե անհապաղ սպանել նըան և թաղել մորթով (առանց քերթելու) հողի տակ առնվազն 3 արշին խորության:

Թեև մսի և արյան մեջ վարակ չկա, բայց թքով կեղառած մորթին քերթելուց կամ գլխի և վողնուղեղի հատումից շատ հեշտությամբ կարելի յե վարակվել, յեթե ձեռքերի վրա կան թարմ պլոկվածքներ կամ ճանդովածքներ, կամ յեթե դիահատության ժամանակ պատահաբար կտրվի ձեռքը:

Մի հարց ևս կա. շատ դժվար ե իմանալ հաստատպես, թե վար շունը, վար կատուն և կծած կատաղած կենդանուց և վորը վոչ. ուստի պետք ե նախազգուշական միջոցներ ձեռք առնել բոլոր շների և կատուների դեմ 5 վերատի վրա անտեղից, վորահղ յերևացել ե կատաղած շունը:

Վորովինեան այդ ձեռնարկումները շատ կարևոր են, ուստի բերում ենք այստեղ ԽՍՀՄ-ի մեջ ընդունված անասնաբուժական կանոնադրության հոգվածները կատաղության դեմ պարզաբի մասին: Այս բոլորը պետք ե իմանան համայն Միության քաղաքացիները և պետք ե ամեն կերպ աջակցեն նրանց կիրառմանը:

Հոդ. 32. Կատաղած կենդանիներին սպանել (կ. 3 հոդ. 14):

Հոդ. 33. Կատաղությունից կասկածելի կենդանիներին ա) շներին և կատուներին սպանել (կ. 3 հոդ 14):

բ) Մյուս կենդանիներին պետք ե պահել անասնաբուժական հսկողության ներքո (կ. 6, հ. 14) մինչև պարզվի նրանց հիվանդության բնույթը, վորպեսզի կարելի լինի նպատակահարմար կերպով ոգնություն հասցնել այն անձանց, վորոնց կծել են կատաղությունից կասկածելի կենդանիները:

Հոդ. 34. Կատաղած կենդանիների կծածներին.

ա) շներին ու կատուներին սպանել.

բ) մյուս կենդանիներին պահել անասնաբուժական հսկողության տակ (կ. 6 հ. 14) և կանխարգելիչ սրսկումների լինթարկել նրանց:

Հոդ. 35. Այս շներին և կատուներին, վորոնք կասկածելի լեն կատաղած կենդանու կըծածի նկատմամբ, պահել վորոշ ժամանակ հօսկողության տակ (կ. 6 հ. 13). յեթե այդ կենդանիների տերերը կամ նրանց փոխարինողները չեն ցանկանա պահել հսկողության տակ, կամ յեթե չեն կատարի այդ հսկողության պայմանները, այն ժամանակ սպանել շներին ու կատուներին:

Հոդ. 36. Վոչ բարեհաջող տեղերում պետք է բոլոր շներին կապել և շները պետք ե ունենան դնչակախներ։ Սպանել այն շներին, վորոնք ի խախտումն այս կարգադրության ազատ կինեն և դնչակալ չեն ունենա։

Այս որենքի նշանակությունը կայանում է հետևյալում։

Մոսկվայի նահանգում կատաղության դեմ պարագարի համար հրատարակված եր պարտադիր վորոշում, վորը պատերազմի և հեղափոխության տարիներում լավ չեր դործալըրգում և արդ պատճառով կատաղած կենդանիների կծածների թիվը շատ ավելացավ. ահա թվերը. Մոսկվայի Պատերյան կայանում բժշկվել են.

Մոսկվայից	Մոսկվ. նահանգից.
1913 թ. — 1,108 մարդ	583 մարդ
1914 թ. — 1,134 »	611 »
1915 թ. — 1,072 »	738 »
1925 թ. — 3,974 »	2654 »

1925 թվին ընդամենը բժշկվել են 6628 մարդ։ Կատաղության դեմ տարվող կանոնավոր պարագարի հիմքն այնպես պետք ե դնել, վոր շըները չկծեն մեկմեկու և չտարածեն կատաղությունը, իսկ զրա համար պետք ե հետևել, վոր անտեր ու թափառող շներ շինեն, մնացածները բոլորը լինեն կապած և դնչակալ ունենան։

Այս ձեռնարկումների ոգուան ակնհայտ ե հետևյալից։

Առաջ Անգլիայում կատաղությունից ամեն տարի ստուգում ելին 200—300 շուն. 1889 թ. կարգադրվեց, վոր շներն անպատճառ ունենան դնչակալ և 1892 թվին կատաղությունից ստուգին 38 շուն. Կատաղած շների պակասման պատճառով պակասեց կծածների և կատաղությունից մեռած մարդկանց ու կենդանիների թիվը. Անգլիական «ազատասիրությունը» չեր կարող հանդուրժել շների դնչակալը և հասարակության մեջ սկսեցին բողոքել շների համար մտցրած դնչակաների դեմ. շներն ստացան ազատություն և սկսեցին կծել մեկ-մեկու, իսկ դրա հետևանքը յեղավ այն, վոր 1895 թ. կատաղածների թիվը դարձավ 673. ինչ ասել կուզի, վոր շնորհիվ այդ հանգամանքի մարդիկ տուժեցին. ուստի 1895 թ. հրատարակվեց խիստ հրաման, վոր անխնա կերպով պետք ե կիրառել դնչակաների մասին հրատարակած որենքը և իբրև հետեւանք 1898 թ. կար իիայն 17 կատաղած շուն, 1891 թվին — 9, 1900 թվին — 6 և 1901 թվին միայն մեկ շուն։ Այժմ Անգլիայում կատաղություն չկա։

Ինչպես տեսանք, Անգլիայում հաջողվել է գոչնչացնել կատաղությունը շնորհիվ խիստ միջոցների շների դեմ։

Համապատասխան պարտադիր վորոշում հը-
րատարակել են մեր գործկոմները. անհրաժեշտ ե,
վոր այդ պարտադիր վորոշումը կիրառվեր կյան-
քի մեջ խիստ կերպով և նման վորոշումներ հը-
րատարակեցին բոլոր գործկոմները։ Հարկավոր ե
առանձին ուշադրություն դարձնել դնչակալների
վրա, ուստի ցանկալի յե մտցնել բացի տուրքի
գանձումից դնչակալներ շների համար, վորպես-
զի հնարավոր լինի արգելել կատաղության տա-
րածումը շների սիմլանց կծելու միջնորդ:

Այստեղ ավելորդ չենք համարում բերել մի
քանի կետեր Յերևանի գործկոմի վորոշումից։

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄ

Քաղաքածք № 28

ՔԱՂԱՔՈՒՄ ՇՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Քաղաքացիներին կատաղած շների կծե-
լուց ապահովելու համար, Քաղխորհրդի նախա-
դահությունը վորոշեց՝

ա. Ամեն մի քաղաքացի, վորը ցանկանում
ե պահել շուն, պարտավոր ե մեկ ամսվա ըն-
թացքում վերցնել թույլտվություն Գավգործկո-

մից և համապատասխան համար Տեղ. Տնտեսու-
թյան բաժնից։

բ. Քաղաքի բոլոր շներն անկախ նրանից,
մասն են գալիս ազատ, թե գանվում են կապած
դրության՝ պետք ե լինեն զգնոցով, վորոնցից
կախ են տրվելու Քաղմիլիցիալից ստացած հա-
մարները։

գ. Բակերի շները ցերեկը պետք ե լինեն
կապած, գիշերները կարող են ազատ լինել կա-
պանքից, նախապես բակերի արտաքին դռները
կողպելուց հետո։

դ. Տնային (սենյակի) շներին կարելի յե
բաց թողնել փողոց, ուղեկցողների հետ։

ե. Փողոց գուրս բերած շները պետք ե
ունենան դնչակալներ։

զ. Ա. կետում նշանակված ժամանակամի-
ջոցից հետո բոլոր այն շները, վորոնք չեն ու-
նենա զգնոցներ և համապատասխան համարներ,
կհամարվեն թափառական և անկախ նրանից,
թե կհայտնաբերվեն փողոցում կամ բակերում,
անմիջապես կվոչնչացվեն։

2. Սույն պարտագիր վորոշումը խախտող-
ները կը ենթարկվեն մինչև 25 ո. տուգանքի կամ
մինչև 10 որ հարկադիր աշխատանքի։

ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԵԶ

Վորպեսզի առաջարկված ձեռնարկումները կատաղած կենդանիների դեմ պայքարի համար ունեն ան հաջողություն, անհրաժեշտ ե, վոր ալդ միջոցները կիրառելին բոլորն անխտիր։ Ազգաբնակությունը, գիտակցելով, թե կատաղությունն ինչ մեծ վնաս ե տարիս մարդկանց, պետք ե ինքը մասնակցություն ունենա նրա դեմ պայքարի մեջ։

Շատ տգետ անձինք կան, վորոնք թագընում են թե իրենց շանը կատաղած շուն և կծել, կամ չեն կապում շներին կամ թագինում են նույնը մինչև անդամ իրենց հարևանների վերաբերյալ. ի հարկե, դրա պատճառը գիտակցության պակասությունն ե և այն, վոր չեն հասկանում, թե կատաղած կենդանին ինչ մեծ վըտանդ ե սպառնում մարդկանց։


Անշուշտ կան ազգաբնակության մեջ և զիտակից տարրեր, վորոնք, համախմբվելով և կազմելով խմբակներ, լեռանդուն կերպով միջոցներ են ձեռք առնում կոտորելու անտուն և թափառող շներին։

Բոլորիս նպատակը պետք է ալդ լինի, այսինքն կազմակերպվենք պալքարելու կատաղած կենդանիների դեմ, վոչնչացնելու անտուն և թափառող շներին, հսկելու, վոր շները ցուցակագրված լինեն, վոր ունենան վզկապ, վորից կախած լինի համարը մետաղյա թերթիկի վրա, հսկելու, վոր շներին կապած պահեն և նրանք դնչակալ ունենան, վոր վոչ վոք փողոց դուրս չըերի իր շանը առանց շղթայի ու առանց գընչկալի, հսկելու, վոր կատաղած կենդանու կամ կատաղությունից կասկածելի կենդանու կծածներին անհապաղ ոգնություն հասցնեն Ցերևանի Պաստերյան կայանում։

Միայն այս կերպ կարելի յե արժատախիլ անել ալդ սարսափելի հիվանդությունը, վորն ահազին վն սսներ և հասցնում մարդկանց։

Հայութի պահ և աշխատանք առ առ
էլեկտրական աշխատանք գույքի մեջ
առ առ աշխատանք առ առ առ առ
զայտ պահ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ
առ առ առ առ առ առ առ առ

ՀՀ Ազգային գրադարան



NL0267839

6966

ՍՈՂԵԶԱՊՈՅԻԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀԱԼՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Պոռնիկ Դարովի գատը—սպասվոծ	
2. Միջիլիս	»
3. Մալարիա	» 10.
4. Առողջապահ հուշատեար	5
5. Նվիր զեղջկունուն	10
6. Պալարախոս	10
7. Մարդու ճիճուները	10
8. Մաշկի միքանի տարածված հիվանդութ	10
9. Մալարիա (բ. տպագրություն)	10

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Միկրոբներ

Կարմրուկ

Դիֆտերիոս

Քութեց

Տրախոմա

Դիմել հետեւալ հասցելով՝ Յերևան, Առողջ. Ժողկումիսարիատի Անհամանարակագիտ. բաժնին

Эривань Народ. Комиссариат Здравоохранения Сан.
Эпидемич. отделу.